

ծածկուած են գալարուն, ճաշակաւոր բուսազարդերով: Սաչերուն անկիւնաւոր ծաւրերը իրարու կապուած են զծաղրութեամբ, որոնք խաչերուն միջև ութանկիւն աստղաձեւ կեղրոնազիծ զծածկեր են: Փեղկերուն ասորին մասերը նոյնպէս ծածկուած են բուսական կամ ժանեկաձեւ գեղեցիկ ու ճաշակաւոր փորագրութիւններով: Գօտիները, որոնք կ'եղերեն դուռերուն արտաքին ամանակը, կազմուած են զծածկերով՝ որոնք ծաղած են բուսական ոճաւորումէ եւ բոյրն ալ նման են իրարու եւ կը յիշեցնեն 1272 թուականէն զրակային (նկար թիւ 14 եւ 15) գօտին: Ասոնց, եւ նաեւ սելճուգեան տիրակալներու համար Հայ փայտափորագիր վարպեաներէ պատրաստուած գօտիներուն հնագոյնը, եւ նոյն ատեն բնատիար, 1134 թուականէն Մշոյ Առաքելոց վանքին զրան գօտին է (նկար թիւ 20):

Այս դուռերուն զծածկերուն մէջ ոչինչ կայ որ արդէն շատ աւելի վաղուց գործածուած չըլլայ Հայ արուեստին մանրանկարչութեան եւ ուրիշ զարդարուեստներու մէջ: Լաւ կազմուած զծաղրութեամբ այս դուռերուն փորագրութիւնը իրապէս մեծ զրժարութիւններ կը ներկայացնէ՝ բազմաթիւ ու կատարեալ կլորութիւններով եւ կորութիւններով: Փորագրիչը փտաս հե վարպետ ձեռք ցոյց կու տայ այս դուռերուն բոյրին ալ մէջը իր կատարած փորագրութեամբ: Իսկ եթէ իրապէս մէկէ աւելի փորագրիչներու գործեր են այս զանազան դուռերը, ա՛յն ատեն մեծապէս զարմանալի պիտի ըլլայ այսքան կատարելապէս վարպետ Հայ փորագրիչներու գոյութիւնը Կաֆայի մէջ՝ իրարու այդքան մօտ ժամանակակիցութեամբ: Այս դուռերուն կատարեալ փայտափորագրութեան հասնելու համար վարպետը կամ վարպետները պէտք է որ երկար տարիներու փորձառութիւնը ունեցած ըլլան: Մենք սարսուռ կը զգանք խորհելով որ այսքան միայն հասեր է՝ այսքան կատարեալ արուեստով եւ արհեստով գործերէ: Ով ո՞րտէ որքա՛ն փայտափորագրեալ բնախր կտորներ, կարասիներ այս կամ այն կերպով փճացեր եւ այժմ մեզի համար անհետ կորսուեր են, որովհետեւ ինչպէս րասիւնք, այս քանի մը դուռերը անկարելի է որ յանկարծակի, սչինչէն գոյութիւն ստա-

ցած ըլլան եւ յանկարծակի ալ այսքան մեծ արուեստի հասնելէ վերջ՝ գաղթած ըլլան գոյութիւն ունենայէ: Արդարեւ, սահմակցուցիչ է խորհիլ կորուստներուն մասին՝ որ կը թելագրեն այս մեծ մասամբ ջարդուած եւ հաշմուած բնախր նմոյշները եկեղեցական դուռերու:

Հետաքրքրական է որ Կաֆայի այս դուռերուն զծաղրական կազմութիւնը Հայոց մէջ այլուր չէ գործածուած դուռերու վրայ: Այլուր երբ խաչ գործածուած է Հայ փայտափորագրական իրերու վրայ՝ դուռ, դրակայ եւ այլն, կա՛մ անօրինական պատկերներ եւ կամ խաչարբերու աղբեղութեամբ ճոխ խաչաձեւեր գործածուած են: Կաֆայի մէջ է որ դուռերու զծաղրութեանց շարագրութիւնը մեր վերը նկարագրած խաչաշարքերու ոճով կատարուած է: Բացառութիւն է Մշոյ Առաքելոց հնագրան (հնագոյն) զրան զծաղրութիւնը երկու փեղկերուն վրայ:

Աւելի չենք խորանար զծաղրութեան վրայ Կաֆայի եւ Երուսաղէմի դուռերուն: Գծառձեւ անխուսափելի եւ անտարակուսելիօրէն հայկական ըլլայր այնքան պարզ է, որ կարիք չկայ աւելի ընդլայնելու եւ արդէն ծախսալից նկարագրող մեր այս աշխատութիւնը ա՛լ աւելի բազմաձայն ընելու: Սակայն պէտք է որ մը աւելի մանրամասն ներկայացունք ակնառեւ գեղապատ գիտնականներէ՝ Կաֆայի այս դուռերը, իրենց յիշատակարաններուն կատարեալ եւ ամբողջական ընթերցմամբ:

Վերջապէս մենք ոչ միայն շարագրական այլ նաեւ փորագրատճի եւ ծաղկումի նմանութիւն կը գտնենք, օրինակ, 1371 թուականէն Ենոֆորչահի զրան եւ Գոնիայի Պէյ Հաղիմի մզկիթին երկփեղկերուն միջև, որոնք այժմ կը պահուին թրքական եւ իսլամական կոչուած արուեստի թանգարանին մէջ: Սակայն ինչ որ աւելի ակնբախ է այս երկու դուռերուն ալ, ա՛յն է՝ որ երկու մետաղեայ հորիզոնական պնդագօտիները զծաղրատճի բազարձակ նմանութիւն ունին:

Երեւանի Պետ. Պատ. Թանգարանը կը պահուի նաեւ Սեւանի Առաքելոց վանքին հարաւային դուռը, որուն մէկ ներկայանալի նկարը շնորհակալութեամբ ստացայ